ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՓԵՏՐՎԱՐԻ 20–23-Ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքից հետո, որպես ատենապետեր, ժողովը վարելու հրավիրվեցին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը։

Օրակարգի հաստատումից հետո ընթերցվեց եւ հաստատվեց նախորդ՝ 2017 թ. նոյեմբերի 1–3-ին գումարված ԳՀԽ ժողովի արձանագրությունը։

Ժողովի ընթացքում Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց իր կանոնադրության լրամշակված նախագիծը։ Կանոնադրությունների մշակման հանձնախմբի անդամ ի. գ. դ., պրոֆեսոր Գեւորգ Դանիելյանը լուսաբանումներ տվեց նախագծի վերաբերյալ։ ԳՀԽ անդամները քննարկեցին նախագծի հետ առնչված Հայ Եկեղեցու թեմերից ստացված դիտարկումներն ու առաջարկները։ Կարեւոր նկատելով փաստաթղթի վերջնական խմբագրման աշխատանքը՝ հանձնարարվեց պատրաստված կանոնադրությունը ներկայացնել առաջիկա Ազգային-եկեղեցական ժողովի վավերացմանը։

2018 թվականը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է Երիտասարդության տարի։ Այս կապակցությամբ ծրագրվող միջոցառումների եւ երիտասարդական ուխտագնացությունների մասին հանգամանալի զեկույց ներկայացրեց Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական միավորման նախագահ Հովնան արք. Տերտերյանը։ Տեղեկացվեց, որ հիմնական միջոցառումներն

անցկացվելու են հուլիսի 4–8-ն ընկած ժամանակահատվածում եւ եզրափակվելու են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում։ Այս առիթով տարվա ընթացքում նախատեսվում են երիտասարդական խմբերի այցելություններ Սփյուռքի թեմերից։

Գերագույն հոգեւոր խորհուրդը, կատարելով անհրաժեշտ թելադրությունները, ողջունեց իրականացված նախապատրաստական աշխատանքները։

Ժողովի երկրորդ օրը Հայոց Եկեղեցու գործառնությունների բարելավման ծրագրի ընթացքի վերաբերյալ զեկույց ներկայացրեց «Դավիդյան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասո Դավիդյանը։ Տեղեկացնելով կատարված աշխատանքի եւ առաջիկա անելիքների մասին՝ տիար Ասո Դավիդյանը նաեւ պատասխանեց ԳՀԽ անդամներին հուզող հարցերին։

Տրված պարզաբանումներից հետո Վեհափառ Հայրապետը Գերագույն հոգեւոր խորհրդի անունից գնահատանք հայտնեց տիար Ասո Դավիդյանին՝ նրա եկեղեցանվեր օգտաշատ ծառայության համար։

Հայաստանի առաջին Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձի տոնախմբման նպատակով ստեղծված Մայր Աթոռի կազմակերպիչ հանձնախմբի աշխատանքների մասին զեկուցեց հանձնախմբի նախագահ Նաթան արք. Հովհաննիսյանը։ Տեղեկացվեց այս առիթով կազմակերպվելիք գիտաժողովների, ցուցահանդեսների, արխիվային նյութերի հրատարակությունների ու նախատեսվող այլ միջոցառումների, ինչպես նաեւ համապետական տոնախմբման ծրագրին Հայոց Եկեղեցու մասնակցության մասին։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների գործունեության հայեցակարգի մշակման եւ կրթական գործընթացի կազմակերպման վերաբերյալ զեկույցներ ներկայացրեցին հոգեւոր բարձրագույն հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը։

ԳՀԽ անդամները գոհունակությամբ ընդունեցին ներկայացված զեկույցները՝ կարեւորելով եկեղեցականների պատշաճ պատրաստության ուղղությամբ ձեռնարկվող քայլերն ու ընդհանուր հայեցակարգի մշակումը։

Ժողովի վերջին նիստին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու թեմերի՝ 2017 թ. գործունեության տեղեկագիրը։

Ժողովականների ուշադրությանը հանձնվեց նաեւ Մայր Աթոռի ֆինանսական հաշվետու զեկույցը։

Վերջում Գերագույն հոգեւոր խորհուրդը գնահատանքով ողջունեց Հայոց Եկեղեցու գործունեությունը ներկայացնող ընդարձակ զեկույցները։

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովի ընթացքում, ներեկեղեցական հարցերի շարքում, անդրադարձ կատարվեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կյանքում վերջին տարիների զարգացումներին եւ պատրիարքական ընտրությունների կազմակերպման գործընթացին։

Քննարկումների արդյունքում Գերագույն հոգեւոր խորհուրդը հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ.

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Գերագույն հոգեւոր խորհուրդը կրկին իր մտահոգությունն է արտահայտում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի հիվանդության պատճառով անցած տասը տարիների ընթացքում Պատրիարքության եւ պոլսահայության կյանքում տեղ գտած անցանկալի զարգացումների առնչությամբ։ Պատրիարքական Աթոռի շուրջ ստեղծված իրավիճակը լուրջ անհանգստություն եւ ընդվզում է առաջ բերել աշխարհասփյուռ մեր ժողովրդի մեջ։

Փաստացի թափուր Աթոռի իրողության եւ նոր պատրիարքական ընտրություններ անցկացնելու հրամայականի առջեւ 2016 թվականին Պատրիարքության մեջ նոր զգայունություններ առաջացան, որոնց փարատման համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի հորդորով Սուրբ Էջմիածին հրավիրված Աթոռի եպիսկոպոսաց դասը հանձնառու եղավ հանգուցալուծման առաջնորդելու առկա խնդիրները։ Արդյունքում պատրիարքական տեղապահի ընտրությունը նոր հույս ներշնչեց պատմական Աթոռը գահակալով օժտելու եւ պոլսահայության բնականոն կյանքը վերականգնելու առումով։

Ցավով ենք արձանագրում, որ կարճ ժամանակ անց եկեղեցական պատասխանատու մարմինների ու անհատների անշրջահայաց քայլերի հետեւանքով ստեղծվեց մի իրավիճակ, որն առիթ տվեց արտաքին ներազդեցությունների եւ Թուրքիայի իշխանությունների միջամտության՝ հանգեցնելով նորանոր հուզումների եւ վերստին ձախողելով պատրիարքական ընտրությունների կազմակերպմանն ի նպաստ ներդրված ջանքերը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մշտապես ողջունել է պոլսահայության կամարտահայտությունը եւ իր զորակցությունն է բերել Աթոռի պատկան կառույցների կողմից առնվող որոշումներին:

Պոլսո Պատրիարքության Կրոնական ժողովի 2018 թ. փետրվարի 9-ի որոշումը նկատի առնելով հանդերձ՝ սթափության կոչ ենք ուղղում Աթոռի միաբաններ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեֆչյանին, Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին, Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանին եւ մնացյալ եկեղեցականներին՝ սեփական ձգտումներից ու միջանձնային հարաբերություններից վեր դասելու եւ առաջնային նկատելու Կ. Պոլսո Աթոռի շահը՝ ամենայն իմաստությամբ եւ հանձնառությամբ սրբագրելու արձանագրված սխալ գործընթացները եւ վերականգնելու խաղաղությունը, միասնությունն ու համերաշխությունը պոլսահայոց ալեկոծյալ կյանքում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հորդորն է Կրոնական ժողովի անդամներին եւ համայնքում հանգամանք ու հեղինակություն ունեցող աշխարհական հայրդիներին՝ միաբան ու համախոհուրդ, Հայոց Եկեղեցու կանոնների եւ օրինական պահանջների պահպանմամբ, հետամուտ լինել երկարամյա ծանր հիվանդության մեջ գտնվող Ամենապատիվ Մեսրոպ Պատրիարքին անգործունյա ճանաչելուն եւ պետության հետ սահմանված ընթացակարգով պատրիարքական ընտրությունների կազմակերպմանը՝ ի պայծառություն Պոլսո Հայոց Պատրիարքության եւ ի մխիթարություն մեր բարեպաշտ ժողովրդի:

Մեր ակնկալությունն է Թուրքիայի իշխանություններից, որ ընդառաջեն Հայոց Պատրիարքի ընտրությունների կազմակերպման հայ համայնքի արդար պահանջին:

Հանդարտության հրավեր ենք ուղղում նաեւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ ողջախոհությամբ եւ զսպվածությամբ առիթ ընձեռելու Պոլսո Աթոռին՝ հաղթահարելու ստեղծված կացությունը:

«Եւ վերջապես, եղբայրնե՛ր, ո՛ղջ եղեք, հաստատո՛ւն մնացեք, մխիթարվեցե՛ք, միաբա՛ն եղեք, խաղաղությո՛ւն արեք. եւ խաղաղության ու սիրո Աստվածը թող լինի ձեզ հետ (Բ. Կորնթ. ԺԳ. 11)»: